

առաջացած բարոյական սովորութիւնն էլ այն է, որ մեծերին և ուսուցիչներին չեն յարգում, երբեմն գրքեր են գողանում և այլն, և որ գլխաւորն է, անգործ են դառնում ու ծուլանում:

Լ. Ն. Տալսոյ,

ժ. Ը

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՐՏԷՋՆԵՐ ԵՒ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱԾՈՒՆԵՐ
(ՄԱՐԳԵՐ *)

Նոր ժամանակներս սկսում են դաստիարակչական միջոցների մէջ մեռեալ նիւթերի տպաւորման փոխարէն կենդանի դիտողութեանը խիստ կարեւոր նշանակութիւն վերագրել և դաստիարակչական առարկաների ընտրութեան ժամանակ նախամեծար են համարում այն ամենն, ինչ որ ծառայում է կենդանի դիտողութեան: Այս կըրթութեան մեթոդն ուսումնասիրելիս դպրոցական պարտէզը չէ կարելի չընդունել որպէս դաստիարակութեան մի օրգանական բաղկացուցիչ մաս: Սկանդինաւեան շատ դպրոցներում պարտիզի մշակութիւնը արդէն ընդունել են դաստիարակութեան որպէս մէկ էական մասը: Նոյնպէս Բրիտաւեան ժողովրդական դպրոցներում արդէն մտցրել են գործնական պարտիզպանութիւնը: Աւստրիական ժողովրդական դպրոցական կանոնադրութիւնը գըպրոցական պարտէզն արդէն բացատրում է որպէս մի անհրաժեշտ ուսուցման միջոց բոլոր ժողովրդական գըպրոցների համար**) և պարտաւորեցրել է համայնքներին

*) Schulgarten und Schülerbeete. Dr. Heinrich Pudor in Berlin. —Comenius—Blätter für Volkserziehung. 1904 Erstes Heft.

**) Գերմանիայում der Zentralausschuss zur Forderung der knabenarbeit նախագահութեամբ երեսփոխան von Schenckendorff-ի մեջն այլոց հետեւում է նոյն ձգտումներին:

յատկացնելու իւրաքանչիւր դպրոցին մի կտոր հող պարտիզի համար, թէպէտեւ իրականութիւնը լիովին չէ համապատասխանում այդ պահանջներին: Մի իսկական դպրոցական պարտէզ այնպէս պէտք է կազմակերպուած լինի, որ իւրաքանչիւր աշակերտին մի ածու յատկացուի, որը նա ինքը պէտք է մշակէ: Այստեղ, ինչպէս ուսման միւս ճիւղերում, պէտք է ձգտել կանոնաւոր յառաջադիմութեան: Դորան այն եղանակով կարելի է հասնել, որ աշակերտն իւրաքանչիւր տարին նոր տունկեր մշակէ, այնպէս որ բոլոր աշակերտների ձեռքով մշակուած տունկերի ամբողջութիւնը կազմէ մի կատարեալ ծաղկանոց, միևնոյն ժամանակ և մի շահաբեր պարտէզ: Մանուկներին կարելի է մշակութեան յանձնել ծաղիկներ, պատանիներին բանջարեղէն, իսկ երիտասարդներին ծառեր: Մշակութեան ուսուցիչը ճիշտ այնպէս պիտի սովորեցնի պարտիզպանութիւն, ինչպէս երաժիշտը երգեցողութիւն, թէև ցանկալի կը լինէր, որ դպրոցական մի ուսուցիչը պարտիզի մշակութեան հրահանգութիւնն ևս միասին յանձն առնէր:

Մի աշակերտական ածուներով դպրոցական պարտիզի կազմակերպութեան և պարտիզպանութեան՝ որպէս ուսուցման առարկայի օգուտները՝ նշանակալից են, և այդ նշանակութիւնը կանխօրէն հարեանցի նայելու բան չէ:

Այս նշանակութիւնը տարածւում է ամենազանազանակերպ ուղղութիւններով: Մի ընդհանուր գաղափար ստանալու համար մենք կը զանազանենք՝ նշանակութիւնն ընդհանրապէս և մասնաւորապէս: Նախ դիտենք մենք մշակութեան դասի մասնաւոր օգուտները: Նոքա տարածւում են նախ բուսաբանութեան շրջանում, Բուսականութիւնը չէր սովորեցուի այլ ևս միայն թղթի վերայ, այսպէս ասած կանաչ սեղանի մօտ, այլ բնութեան մէջ, կամ առնուազն այստեղ կը հիմնէր, և միշտ՝ երբ պէտք լինէր, դէպի այս դիմել կարելի կը լինէր: Բնաւ տարակոյս չկայ, որ երբ աշակերտը տունկերի մէջ ոչ միայն պտտում է, այլ նոցա խնամում և սնուցանում է, ստանում է աւելի խորին ծանօթութիւն նոցա էութեան և

տնկելու ու անեցողութեան օրէնքների մասին, քան եթէ նա դրանք տեսնէ մի միայն իւր գրասեղանի վերայ ընկած։ Ուղիղ այսպէս և գիւղատնտեսական շրջանում։ Այս ի նկատի է առնւում ի հարկէ գիւղական դպրոցների համար։ Բայց որովհետեւ գիւղատնտեսութիւնը ամբողջ ժողովրդի սնուցիչն է, ուստի այս ուղղութեամբ կրթութիւնը և քաղաքային դպրոցներին նպաստաւոր է։ Այս կերպ և այս կերպով ջնջուի այնօր այնպէս յաճախ երեւան եկող սուր հակադրութիւնը գիւղացիների և քաղաքացիների մէջ, որը հիմնուած է վերջիններիս գիւղատնտեսութեան նկատմամբ ունեցած տգիտութեան վերայ։ Այս ուղղութեամբ դպրոցական պարտէզը պէտք է պարունակէ մի մասնաւոր բաժին գիւղատնտեսութեան համար և այստեղ տեսականը գործնականի հետ պիտի հայթայթէ աշակերտին անհրաժեշտ ծանօթութիւններ։

Նոյնպէս և կենդանաբանութիւնը կօդտուի դպրոցական պարտիզից, և կենդանաբանութեան ուսուցիչը կարող է շատ կենդանիներ, ինչպէս թռչուններ, թիթեռնիկներ, միջատներ, որդեր և այլն աշակերտներին ցոյց տալ կեանքում։ Թէ այսպիսի մեթոդն ինչ օգուտ կունենար, մարդ կարող է ըմբռնել, երբ մտածում է, որ հէնց յատկապէս դաստիարակութեան պարտաւորութիւնն է մանուկներին տեսնել սովորեցնել, դիտել սովորեցնել։ Եւ երբ մանուկները դիտել և զննել են, այն ժամանակ է միայն համար պահանջւում և նոյա ծանօթութիւններ հաղորդւում զննուած առարկաների վերայ։ Ուղիղ այս տեսակէտով և միւս առարկաների ուսուցիչները կարող էին դպրոցական պարտիզի արգիւնքից օգտուել, կամ դպրոցական պարտիզի մշակութեան հետ կապ ունեցող աշխատանքները գոնեայ մի փորձնական վարժութիւն կը լինէին զանազան ժամերում սովորածների համար, այնպէս օր. բուսաբանութեան, երկրաչափութեան և հարթաչափութեան համար։ Հանքաբանութիւնը, երկրաչափութիւնը և վիմագրութիւնը (Petrographie) և երկրաբանութիւնը կարող են մինչև անգամ ուղղակի օգտուել դպրոցական պարտիզից,

այդպէս ընագիտութիւնն ու արարալուծութիւնն։ Այս նկատմամբ դպրոցական պարտէզը մասնաւոր արժէք կարող է ունենալ ընդհանրական դպրոցների համար, նկարչութեան ուսուցիչը նոյնպէս օգուտներ ունի դպրոցական պարտիզից։ Այսօր դաճարձաններից նկարել տալուց աւելի ու աւելի հեռանում են, նախամեծար են համարում ընտելեան անմիջական նախատիպը և արտանկարումը հիմնում են կենդանի ընտելեան զննութեան վերայ։ Ահա այստեղ դպրոցական պարտէզը կարճէք մի գիւտ է, ինչպէս Կծերն, ուրուագծերը, մարդակները դիտել սովորելու, այնպէս և դրանց ընդօրինակելուն վարժուելու։ Դրա հետ միասին ծաղիկների ու տերեւների գոյների և դարձնան, ամրան ու աշնան գունավորութեան գիտողութիւնը։

Ինչ վերաբերում է դպրոցական պարտիզի օգուտներին ընդհանրապէս, ևս խիստ զանազանակերպ են։ Նախ դպրոցական պարտէզը միջոց է տալիս աշակերտներին կազդուրուելու։ Պարտիզի աշխատանքը կազդուրումն է աշակերտի համար այն կերպով, որ նա աշխատանքի մի փոփոխութիւն է նշանակում, որովհետեւ աշխատանքի փոփոխութեան մէջ կայ կազդուրումն և յօգնեցնող է միայն միննոյն ուղղութեամբ երկար շարունակուող աշխատանքը։ Կազդուրման հետ ձեռք ձեռքի ընթանում է դրդիւնը։ Բնութեան խիստ մօտ շփման պատճառով աշակերտը զննութեան և գիտողութեան հիմամբ, ինչպէս և ինքնագործունէութեան հիմամբ հետաքրքրութեան դրդիւն է ստանում թէ դէպի մասնաւորը և թէ դէպի ընդհանուրը։

Նա դրդիւն է ստանում ընտելիւնը խորապէս ըմբռնելու և դրանով նրա գիտութեան ծարաւը յազենում է, հաճութիւնը դէպի հոգեկան աշխատանքն ու ստեղծագործութիւնը, ճանաչելը և հետազօտելը կենդանի է մնում։ Դպրոցական պարտիզի մշակութեան միջոցով կարող է դարձեալ կարգաւորութեան զգացումը կազմակերպուել, աշակերտը սովորում է կարգ ու կանոնի էութիւնը, այսինքն թէ իւրաքանչիւր իրը իւր իսկական տե-

դուռն է։ Նմանապէս և գեղեցկութեան զգացումը դրդիւ է ստանում, կատարելագործւում է և քնքշանում։ Որովհետեւ մենք բնութեան մէջ ենք գտնում միշտ սկզբնատիպը գեղեցկութեան բոլոր կանոնների և օրէնքների համար, բնութիւնից ենք վերցնում մենք մեր բմբունումները գեղեցկութեան մասին, բնութեան զննողութեան մէջ է կազմւում մեր գեղեցկի իդէալը։ Դաստիարակութեան համար բնականապէս սա ամենամեծ արժէքն ունի։ Որովհետեւ դպրոցը ինչ տեսակի էլ լինի՝ աշակերտին վնաս չէ, երբ բնական—գեղեցկի խելամտութեամբ և սիրով ներշնչւում է։ Եւ բացի դրանից նրա համար օգտակար կը լինի, երբ նա բնութեան մէջ դրոշմուած օրգանական օրէնքները սովորում է, օրգանական աճման օրէնքները և զարգացման օրէնքները, և առաջնորդող դաստիարակութեան միջոցին այստեղ՝ բնութեան մէջ՝ աղբիւրի մօտ բոլոր այս կարեւոր օրէնքները շատ աւելի դիւրին և արագ կը հասկանայ նա, քան դրքերից և թղթերից, այո, այստեղ սոքա նորա մէջ կատարեալ միս և արիւն կը դառնան։

Նա կը զարմանայի, եթէ աշակերտը, երբ նա տունկերը խնամում է կամ այսպէս ասած դաստիարակում է, դրանից նոյնպէս չպէտք է սովորէր ինքն իրան դաստիարակել։ Որովհետեւ իւրաքանչիւր դաստիարակութիւնը հնարաւոր է միայն ինքնադաստիարակութեան հիմամբ, բայց այս ինքնադաստիարակութեան համար ծաղիկների և տունկերի այն խնամքն ամենայնաւոր ներգործութիւնը կանէր։ Բացի այդ սորա հետ արդէն հիմքը դրւում է ապագայում սեփական օրդինների մեծացնելուն և կրթելուն։

Այն էլ խիստ գնահատելի է, որ աշակերտը պարտիզպանութեան ժամանակ ինքնուրոյն է, այո՛ իսկական մտքով, մինչև անգամ ստեղծագործող է։ Նա սովորում է այսպէս ինքնաշխատութիւն, ինքնօրէնութիւն, նա կը հասկանայ, թէ ի՞նչ է անհատականութիւնը։ Նա ինքնագործունեայ է և կը սովորի հասկանալ արուեստագիտական ինքնաստեղծագործութիւնը։ Բնութեան՝ նորա լինելու և աճելու յարատեւ և կենդանի զննողութիւնից

յառաջ կը դայ աշակերտի մէջ մղումն մի կողմից բնութիւնը հետազօտելու, միւս կողմից սակայն նոյնն ընդօրինակելու: Չէ որ փռէօրէյ, Պետալօցցի այսպէս էին հասկանում դաստիարակութեան սկզբունքը: Զննողութիւնը պէտք է աշակերտին ստեղծագործ դարձնի:

Վերջապէս պարտիզպանութիւնը դործ կը դնէ աշակերտի վրայ ցանկալի բարոյական կրթիչ աղբեցութիւն, նորան կազնուացնի, նորան կազատի մակերևոյթական լինելուց, նորա զգացմունքը կը կատարելագործի, նորան կարելի է՝ ասել՝ ոգի կը տայ: Ներկայումս դանդատում են միշտ, թէ ներկայ սերունդի մէջ իդէալները հազուադէպ են: Ահա ուղղակի պարտիզի մշակութիւնը, ինչքան որ սա մանկան կամ աղջկան միջոց կը տայ անհատապէս զբաղուելու և միևնոյն ժամանակ ինքն իրա մէջ խորասուզուելու, կարող է այստեղ օգնել և բարձր ու աղնիւ բնութիւններ կազմակերպել: Այո՛ հէնց սորա մէջ, պարտիզի մշակութեան բարբը կրթող ներգործութեան մէջն է թերևս նորա ամենաբարձր արժէքը: Մանկավարժները չպէտք է սորան հարևանցի նայեն: Րէալական դպրոցներում բնագիտութեան, նախնական դպրոցներում բանջարեղէն և պտղատու ծառերի, գիւղական դպրոցներում էսթէտիքական—արուեստական, այդ բոլորի մէջ սակայն մի կողմից առողջապահական, միւս կողմից բարբի կրթութեան վրայ կարելի է ծանրանալ: Մենք ունինք այստեղ պէտք եղած հրահանգութեան նիւթից աւելին, որն ոչ թէ ծանրաբեռնութիւն, այլ մի թեթևացումն ունի որպէս հետեանք, մանաւանդ որ գարնան, ամրան և աշնան իւր տեղն ունի:

* * *

Մենք նկատենք այժմ հարցի առողջապահական նշանակութիւնը, նախ աստիճաններից սկսած Գերմանիայում մանկավարժական շրջանում մի շարժում է սկսել, որն այն բանի կողմն է, թէ դպրոցներում աշակերտի ոչ միայն հոգեկան և այլ և մարմնական կատարելագործութիւնն

ևս հաշուի պէտք է առնուի, մանաւանդ որ հոգին մարմնի հետ կապուած է և մարմնից կախումն ունի։ Այդ շարժումը, որի գլուխն է կանգնած երեսփոխան Փօն Շենքենդօրֆի, նպատակ է դրել երիտասարդական և ժողովրդական խաղերը։ Աշխատում են մարմնամարզութեան ժամերն աւելացնել և ձգտում են ճաշերից յետոյ ազատ ժամանակ ձեռք բերել խաղերի համար։ Միւս կողմից աշխատում է տան աշխատանքը (աշակերտի) սահմանափակել և որքան հնարաւոր է բոլորովին վերացնել։ Գրպարոցական առողջութեան խնամատարութիւնն և դպրոցական առողջապահութիւնը նոյնպէս ստանում են աւելի ու աւելի մեծ նշանակութիւն։ Սորա հետ կապ ունի այն շարժումն, որ դպրոցական պարտէզների և աշակերտական ածուների խնդրի ջատագովն է։ Պարտիզպանութիւնը ամենաառողջ մարմնավարժութիւններից մէկն է, գլխաւորապէս այն պատճառով, որ նա մարմինը միակողմանի կերպով չէ զբաղեցնում, այլ նոյնը ներդաշնակօրէն կազմակերպում է։ Բոլոր մարզանքները (sport) աւելի կամ պակաս կրում են այն յոռի կողմն, որ նոքա որոշ դորժարանները, մկաններն և ջիղերն ի վնաս միւսների զարգացնում են։ Յատկապէս միայն լողալը մի մարմնամարզութիւն է, որը մարմինը ներդաշնակօրէն զարգացնում է ինչպէս պարտիզպանութիւնը։ Նմանապէս մարմնամարզութիւնը աւելի կամ պակաս ունի վերոյիշեալ յոռի կողմը, մանաւանդ երբ այնպէս է կատարւում, ինչպէս այսօր սովորական է դպրոցներում։ Շատ խաղեր իրօք զբաղեցնում են մարմինը զանազան ուղղութեամբ, և նոքա այն լաւութիւնն ունեն, որ հասարակական ոգի են յառաջացնում և որոշ բարոյական առաքինութիւններ (վճառականութիւնը, նպատակի գիտակցութիւնը, գործունէութիւնը և այլն) զարգացնում են, այնպէս և պարտիզի մշակութեան նկատմամբ դարձեալ ի նկատի է առնւում, որ նա ենթակայի զգացմունքի, նրա հիմնուորման և խորունկացման վերայ ցանկալի ազդեցութիւն է գործ դնում։ Սակայն ինչ որ գլխաւորապէս ուշադրութեան

արժանի է, այն է, որ պարտիզականութիւնը ընդհանրապէս ոչ ուրիշ կերպ, այլ միայն թարմ օգուժ կարելի է անել, մինչդեռ մարմնամարդութեան արժանիքը հէնց դորանով ցնորական է դառնում, որ այդ տարուայ որոշ ժամանակներում միայն փակուած միջավայրում կարելի է կատարել: Երիտասարդութիւնը, որին մաքուր օգնամենաանհրաժեշտ է առողջութեան պահպանութեան և աճման խնամատարութեան համար, օրուան ժամերի մեծ մասը փոշոտ դասարաններում փակուած է: Եթէ յաջողուէր դասի առանձին մասերը, ինչպէս բնական պատմութիւնը, մշակութեան դասի հետ միացնել, կամ նոյնպէս գոնէ մասամբ պարտիզում դասախօսել, այսպէս մենք շատ բան շահած կը լինէինք մեր երիտասարդութեան առողջապահութեան համար: Եւ եթէ իրօք, ինչպէս ցանկանում է Աւստրիական նախնական դպրոցական օրէնքը, գոնէ թղթի վերայ, ծաղիկների և բանջարեղէնների մշակութեան դասը, որպէս մի օրդանական բաղադրիչ մասը դառնայ ժողովրդական կրթութեան, այսպէս մեր ժողովրդի առողջութեան համար նմանապէս շատ բան շահած կը լինենք. դեռ չեմ յիշում այն, որ նոյնպէս որոշ սօցիալական չարիքները նպաստաւոր ազդեցութիւն կը կրէին, այսինքն կը մեղմանային: Մարդս ոչ հոգի է և ոչ էլ զուտ մարմին, նա մի ամբողջութիւն է մարմնից և հոգուց և պէտք է այնպէս դաստիարակուի ու զարգանայ: Իսկ հազիւ թէ մի մարդկային գործունէութիւն կայ, երբ հոգեկանն և մարմնականն այնպէս ներքին կապակցութեան մէջ լինին, որքան պարտիզականութեան ժամանակը: Այստեղ խիստ դժուար է ասել, ո՞ր զգայականը, հոգեկանն և մտաւորը վերջանում է և մտաւորականն սկսում: Դրանով սակայն դաստիարակութեան ուղղակի մի տիպար միջոց է տրուում: Դպրոցը պէտք է կեանքի համար հրահանգէ, ասում են ամենայն իրաւամբ: Ուստի պէտք է մանկան ոչ միայն լոկ պատրաստի գաղափարներ հազօրդել, այլ պէտք է նրան ճանապարհ ցոյց տալ, որ ինքը գաղափարներ կազմակերպէ: Այս նշանակում է, պէտք է

նրան զննելու և դիտելու համար կրթելւ նոյնպէս և այնտեղ մշակութեան դասն ամենայարմարն է:

Մարմնական կատարելագործութեան հասնելու համար այսօր դաստիարակութեան ծրագրում մարմնամարզութիւնն է ընդունուած, որն էլ դրւում է դասերի վերջը: Այդ իւրաքանչիւրը սեփական փորձառութեամբ կը գիտենայ, թէ ինչպէս հոգին միակողմանիօրէն խիստ յոգնեցնող միւս դասերից յետոյ՝ յաճախ ինքն իրան անընդունակ էր զգում մի կանոնաւոր՝ կրթելու յարմար մարմնամարզութեան: Ենթական այժմ մտաւորապէս այնքան է յոգնել, որ այլ ևս մարմնապէս բնաւ աշխատել կարող չէ: Խաղը դեռ ևս ինչ և իցէ: Բայց պարտաւորիչ «ազատ վարժութիւնները» դժուար են: Դրանով սակայն մարմնամարզութեան ամբողջ արժանիքը, որ մարմնական կազդուրման մէջը պիտի լինէր, ջուրն է ընկնում: Եւ այդպէս էլ, երբ մարմնամարզութիւնը միւս դասերից անմիջապէս առաջ է կատարւում: Այն ժամանակ մարմինն այնքան յոգնած է, որ նորան կապուած հոգին աշխատել չէ կարող: Այստեղ մենք շօշափում ենք հէնց մի քաղցկեղը նոր ժամանակուայ կրթութեան, որը մարդուն երկուքի է ճեղքում՝ հոգեկան մարդ, մարմնական մարդ, մինչդեռ օրինակի համար հին յոյների մէջ հոգում էին այն բանի համար, որ մարդուն օրպէս մի ամբողջութիւն կրթեն: Եւ ինչպէս ասուեցաւ, պարտիզի մշակութեան մէջ այս վատ կողմը չի լինի: Այստեղ ամեն ինչ միացած է, և աշակերտը ոչ միայն կրթւում է հոգով և մարմնով, այլ և դուրս հետ միասին կազդուրւում է—վերջինս մանկավարժութեան տեսակէտով նոյնպէս մի անձանօթ օգուտ չէ: Հայնրիխ Մարէշը իրաւամբ ասում է, «Մեզ թւում է պարտիզի աշխատանքը կոչումն ունի նոյնպէս մասնաւորապէս ազջիկների համար մարմնամարզութեանը փոխարինելու կամ նոյնը լրացնելու, որովհետեւ մանուկները մաքուր օգի մէջ են դուրս գալիս, բոլոր մկանները շարժւում են, զգայարանքները աշխուժօրէն զբաղւում են, և մարդը վարժւում է արեգակի ճառագայթներին և

քրտնքի կաթիլներին: Պէտք է նկատել, որ իւրաքանչիւր երեխան իր աշխատանքի կաշի և այլն:

.

Հեղինակը յօդուածը վերջացնելով՝ յիշում է դերմանական այն բոլոր դպրոցները, որոնց մէջ արդէն իրականացած են դպրոցական պարտէզները և աշակերտական ածուները:

ԳՐԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

2.

ԵՐԳԵՐԻ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ ԽԱՂԵՐԻՅ

Բառերի եւ խօսքերի ազդեցութեան տակ յարադրութիւնը լինում է ճիշտ այնպէս, ինչպէս որ հիմնական երկեակների միաստուց քառեակներ են կազմում: Մի խաղի մէջ եղած մի բառ կամ խօսք յիշեցնում է մի ուրիշ խաղի մէջ եղած նոյն կամ համանման բառը կամ խօսքը, ուստի և երկրորդ խաղը, երբեմն և երրորդը ևլն, առում է առաջին խաղի ետեւից, և երկու, երեք և աւելի խաղեր միացած մնում են յիշողութեան մէջ և ապա երգւում թէ միասին և թէ անկախ:

Այս կերպով կազմուած մեծ երգերի տներն իմաստով իրարու աւելի են յարմարւում քան դէպքի կամ անձի ազդեցութեան տակ միացածներինը: Սակայն որանց մեծ մասն ևս արուեստի տեսակէտից անյաջող բաներ են. որովհետեւ անկախ խաղերի յարադրութիւնն այստեղ արտաքին է և հիմնուած չէ բովանդակութեան վրայ: Ուրիշ